



Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 1—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆՊԱՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մանկավարժական գրա-
կանութիւն: Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Արթին-փաշա Ղազեան. Նամակ Թիւր-
քիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Այ-
նարկներ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐՇԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մի քանի տարի է արդէն, որ մեր գրականու-
թեան մէջ մանկավարժական ճիւղը շատ անու-
շաղիւր վիճակի մէջ է դառնում: Այդ բանը աւելի
է աչքի ընկնում այն պատճառով, որ տարիներ
առաջ մեր գրականութեան մէջ, մանկավարժա-
կան մասը համեմատաբար աւելի հարուստ և
բազմակողմանի էր, երբ դպրոցիւն ունէին թէ
մանկավարժական պարբերական հրատարակու-
թիւններ, ինչպէս էին՝ «Մանկավարժական թեր-
թը», «Վարժարանը», «Մանկավարժանոցը», և
թէ լայն էին տեսնում մանկավարժական ընդհա-
նուր գրութիւններ, թէ ինքնուրոյն և թէ թարգ-
մանաբար՝ դպրոցական, դաստիարակչական և
կրթական դասագրան հարցերի վերաբերութեամբ:
Իսկ այժմ, վերջին տարիները այդ ճիւղը՝ փո-
խանակ աւելի առաջադիմելու, աւելի էլ աղքա-
տացի է:

Հայոց դպրոցները վերաբացումից յետոյ, մենք
չենք յիշում որ լայն տեսած լինէր մի փոքր ի
շատե՛ ուշադրութեան արժանի մանկավարժական
աշխատութիւն, թէ և մեր նոյն իսկ փոքրածիւ-
ղայրոցները շատ էլ լաւ չը նախապատրաստված
վարժապետները և վարժուհիները մանկավարժա-
կան ընթերցանութեան շատ մեծ հարկաւորու-
թիւն ունեն:

Առանց ընդհանուր, հիմնական մանկավարժա-
կան դարգացման, ոչ մի վարժապետ և վարժու-
հի չէ կարող աշուղթեամբ ծառայել կրթու-
թեան գործին, և եթէ նա նոյն իսկ մի քանի
տարի կարողանայ եռանդուն լինել, և լաւ
դաս տալ, ծանօթ լինելով դաստաւութեան
տեխնիկական մասի և մեթոդի հետ, այնու ամե-
նայնիւ տարիներ անցնելուց յետոյ այդպիսի
վարժապետը, կորցնելով իր եռանդը, նոր նիւթ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ

O tempora, o mores

Այդ «ազգային փաշաները» միշտ հալածել են
մեր գրականութեան մէջ երևան եկող ամեն մի
նոր մարդուն, ամեն մի նոր երևոյթ: Այդ բանը
պայապէս անցնում համար մենք փաստեր առաջ կը
բերենք:

Մրանից մի քանի ամիս առաջ «Արձագանքը»
վերջութեան, որ մի երկտասարդ, բարեան ազգանու-
նով, ցանկանում է ամսագիր հրատարակել: «Ար-
ձագանքը» վերջութեան կերպով հարցնում էր. ո՞ր
է Բաբեան, և ինչ անուն ունի նա մեր գրա-
կանութեան մէջ, որ ձեռնարկում է մի այդպիսի
մեծ գործի:

Շատ լաւ. առ ժամանակ, համաձայն ենք այն
մտքի հետ, որ ամսագիր կամ լրագիր հրատարա-
կելու համար շատ լաւ կը լինի ունենալ անուն
և գրական անցնել: Բայց ասացէք, խնդրում ենք,
պ. Յովհաննիսեան, ինչ գրական անցնել ունէիք

չը ստանալով մանկավարժական ընթերցանու-
թեան միջոցով, չը կարողութիւնով և չը թարմա-
նալով մանկավարժական գիտութեան նորանոր
տեղեկութիւններով և պահանջներով, կը դառ-
նայ իսկապէս մի մեքենայ, և երբէք չէ կա-
րող թարմ և ուղիղ հայացքներ ունենալ ընդհա-
նուր դպրոցական գործունէութեան մասին:

Առանց մանկավարժական ընդհանուր դար-
գացման և վերանորոգութեան,—կրկնում ենք,—
ամենաեռանդուն վարժապետը և վարժուհին ան-
գամ տարիներ անցնելուց յետոյ դպրոցական մե-
քենաներ կարող են դառնալ, վնասելով կրթու-
թեան գործին, որը պահանջում է ոչ թէ մեքե-
նայնացում, այլ գիտակցութեամբ և հիմնական
հասկացողութիւններով օժտված աշխատաւոր-
ներ:

Իսկ ինչ պէտք է կարգան հայոց լեզուով մեր
դպրոցական ասպարիզի վրա դրոշմները, քանի
որ մեր գրականութեան մէջ մանկավարժական
վերաբերութեամբ ոչինչ նոր գիրք չէ երևում, ո-
չինչ նոր աշխատութիւն չէ լայն տեսնում:

Հէբեթտի, Ղիստրիզէի և Պետտուցցիի չկու-
նենք հետևող և այդ չկուսակցի մասին վիճող
մեր մանկավարժները այժմ լուր են, և չը նայած
որ իրանց կատարած գործը զեռ շատ փոքր է,
նոքա կարծէք հոգնել են և ենթարկվել դատա-
պարտելի անտարբերութեան:

Միակ բանը, որ մեր դպրոցները վերաբացու-
մից յետոյ լայն է տեսնում մեր ուսումնարան-
ները և ուսումնարանական ասպարիզում գործող-
ները համար,—դոքա դանդաղ դասադրեր են,
որոնց հեղինակները մեծ մասը, չը նայած իրանց
անկարողութեան և կատարեալ անընդունակու-
թեան, դասադրեր հրատարակել իրանց համար
զահաւետ մի պարագումը են դարձրել և ան-
վերջանալի կերպով դասադրեր են հրատարա-
կում: Եւ մենք վկայ ենք, թէ ինչպէս նոյն իսկ
մի և նոյն աւարկայի համար հրատարակվում են
մի քանի դասադրեր՝ մանկավարժական գործին
միանգամայն անտեղեկ տգէտների ձեռքով, և
բոլորն էլ արժանանում են հաւանութեան:

Չունենալով մանկավարժական նախապատրաս-
տութիւն, չունենալով բաւականաչափ հասկացող-
ութիւն դաստաւութեան զանազան մեթոդների
մասին, մեր վարժապետները և վարժուհիները
շատերը, անկասկած, դերի են դառնում այդ
անպէտք, բայց ընդունված դասադրերի ձեռքին,
և այդպիսով թէ մէկ և թէ միւս կողմը նպաս-

տում են այն մեքենայականութեան, որը
ամենապակասակար և ամենա մի դպրոցի
մէջ, և որը օրից օր աւելի է աճում մեր մանկա-
վարժների շրջանում:

Կարոցներ ունենալ առանց մանկավարժական
գրականութեան, վարժապետների և վարժուհիների
դասակարգ ունենալ առանց մանկավարժու-
թեան,—հաւ այն տխուր երևոյթը, որ ներկայաց-
նում է մեզ մեր կրթական գործը, իր բազմաթիւ
թերի կողմերով:

Մեր մեքենայականութեան հետեւում, որը
ամենապակասակար և ամենա մի դպրոցի
մէջ, և որը օրից օր աւելի է աճում մեր մանկա-
վարժների շրջանում:

Օրինակ համար մենք ոչ մի դատողութեան
հիման վրա գրականութեան և մամուլի մէջ հե-
ղինակութիւն չենք կարող համարել պ. Յովհան-
նիսեանին: Ինչպէս Որովհետեւ պ. Յովհաննիսեան
չը նայած որ խմբագիր է համարվում, չը նայած,
որ շատ հասարակական գործերի մէջ է մասնակ-
ցում, չը նայած վերջապէս որ նա հասարակ մարդ-
կանց մէջ չայտնի մարդ է համարվում,—իրեն գը-
րող, իրեն մտաւոր գործիչ չը ստեղծագործեց ոչ մի
այնպիսի բան, և չը յայտնեց այնպիսի մտքեր իր
ամբողջ գործունէութեան ընթացքում, որ մենք
կարողանայինք ասել թէ՛ ահա այս և այն մտա-

տում են այն մեքենայականութեան, որը
ամենապակասակար և ամենա մի դպրոցի
մէջ, և որը օրից օր աւելի է աճում մեր մանկա-
վարժների շրջանում:

Կարոցներ ունենալ առանց մանկավարժական
գրականութեան, վարժապետների և վարժուհիների
դասակարգ ունենալ առանց մանկավարժու-
թեան,—հաւ այն տխուր երևոյթը, որ ներկայաց-
նում է մեզ մեր կրթական գործը, իր բազմաթիւ
թերի կողմերով:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«ԿԱՅԵԱՅ» լրագիրը ստացել է Քուրդայիսից
հետեւեալ հեռագիրը, հոկտեմբերի 13-ից: «Այսօր,
առաւօտեան ժամը 10-ին, Փաղուհի կայսրուհին
բարեհաճեց ընդունել պալատում տիկիններին, ո-
րոնք ներկայացրած են եղել նահանգապետ գե-
ներալ Գրոսմանի ամուսնու միջնորդութեամբ
Այնուհետեւ տեղի ունեցաւ ընտանեկան նախա-
ճաշիկ, որից յետոյ Նոյա Մեծութիւնները այցելե-
ցին զինուորական հիւանդանոցը, մտնելով նոյնպէս
վարակիչ հիւանդութիւնների բաժինը և ողորմած
կերպով խօսեցին հիւանդների հետ: Ժամը 1-ին
Բարձր Հիւրերը ուղևորվեցան երկաթուղով դէպի
Գեղատ: Ժամը 8-ին երեկոյեան լինելու է ճաշիկ-
ընթացքը պալատում և ապա ժողովրդական դրո-
սանք:»

«ԿԱՅԵԱՅ» լրագիրը ստացել է և հետեւեալ հե-
ռագիրը: «Սարազուրեան անցնում, Թիֆլիսից
դէպի Աւշալա ուղևորվելու ժամանակ, հոկտեմ-
բերի 7-ին, Նոյա Մեծութիւններին առաջարկ-
վեց աղնակալութեան կողմից մի նախաճաշիկ,
որի ժամանակ Թագաւոր կայսրը բարձրացրեց
բաժակը աղնակալների կենացն առաջարկելով
և արտասանեց հետեւեալ խօսքերը, որոնց ներկայ
գտնիկները պատասխանեցին «ուրալով»: «Պա-
րոններ, դարձեալ մի անգամ խմում եմ վրաց
քաջարի աղնակալութեան կենացը և օգտվում
եմ այդ դէպքից, որպէս զի թէ կայսրուհու և թէ
խմ անունից շնորհակալութիւն յայտնեմ ձեզ ձեր
այն ջիւղի և սիրովի ընդունելութեան համար,
որը մենք այստեղ վայելցրեցինք: Հաւատարմած կա-
ցէք, որ վրաց աղնակալութեան կարիքները
նոյնքան մօտ են իմ, որքան և ամբողջ ուսու-
աղնակալութեան կարիքները և ամեն բան, ինչ

և որ աշխատութիւնների հիման վրա պ. Յովհան-
նիսեան հեղինակութիւն կարող է համարվել: Ոչ
բանիկ դիմեցութիւններ, ոչ հրատարակիչ լինե-
լը. և ոչ էլ «անունը» չէին կարող ի հարկէ, տալ
պ. Յովհաննիսեանին գրական հեղինակութիւն, և
նա, չը նայած իր «տառն» և չորս տարվայ՝ գոր-
ծունէութեան,—գրական հեղինակութիւն չէ:

Թող ներքի մեզ մի փոքրիկ, անուշադաշտ
Թիֆլիս անել, և պ. Յովհաննիսեանից անցնել
մեծ մարդկանց: Թէ և այդ Թիֆլիսը սազական չէ,
բայց Du superbe au ridicule il n'y a q'un pas,
ասեց Նապոլէոն, որը մենք այս դէպքում հակա-
ռակ կերպով էլ կարող ենք ասել:

Ամբողջ աշխարհը հեղինակութիւն է համա-
րում Սպինոզին, Լասպլին, Գարլինին, և այլն.
գրականութիւնը երկրպագում է Շէկսպիրին, Գեթե-
թէին, Շիլլէին: Ինչպէս,—որովհետեւ Սպինոզը, Լա-
սպլ և Գարլին այնպիսի մտքեր են յայտնել, իսկ
Շէկսպիր, Գեթեթ և Շիլլէր այնպիսի ստեղծագոր-
ծութիւններ ունեն, որ դրանց հիման վրա կա-
րող էին և կարողացան դառնալ ամբողջութեամբ
Եւ եթէ մենք ասում ենք, որ «Համբէտ» երեւի
գրութեան է, «Ֆաուստը» հանճարեղ ստեղծագոր-
ծութիւն է, իսկ «Առաջակները» անմահ աշխա-
տութիւն, այդ ոչ թէ նրա որ դրանց գրողները
Շէկսպիր, Գեթեթ և Շիլլէր են. ընդհակառակը,
այդ նոյն Շէկսպիր, Գեթեթ և Շիլլէր երեւի են մի-
այն նրա համար, որ գրել են այնպիսի բաներ,

որ հնարաւոր կը լինի անել աղնակալութեան
նիւթական վիճակի բարձրագոյն համար, Ես
ուրախութեամբ կանենմ:

Չորեքշաբթի, երեկոյեան հոկտեմբերի 12-ին,
հասան Թիֆլիս Նոյա կայսերական Բարձրու-
թիւնները Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևիչ և
նրա ամուսինը, Մեծ Իշխանուհի Օլգա Ֆեոդորով-
նա, իրանց երեք որդիներով: Ինչպէս հաղորդում
է «ԿԱՅԵԱՅ» լրագիրը, առաջին օրվայ գիշերը
Բարձր Հիւրերը անցկացրին երկաթուղու արքա-
յական վագոններում, իսկ հոկտեմբերի 13-ին ա-
ռաւօտեան, Նորին Բարձրութեան Մեծ Իշխան
Միխայիլ Նիկոլաևիչի ծննդեան օրը, Նոյա
Բարձրութիւնները ուղևորվեցան դէպի պալատը,
որի տնային եկեղեցում մաղթանքներ ներկայ դը-
տնվելուց յետոյ, պալատի դահլիճներից միում
ընդունեցին բազմաթիւ բարձրաստիճան անձանց:
Ապա երկաթուղու վոկալում Նոյա Բարձրու-
թիւնները մասնակցեցին նախաճաշիկին, որը
պատրաստված էր կովկասեան առաջին նետա-
ձիգ բառալիտի օֆիցէրների համար, որը այդ օ-
րը տօնում էր Մեծ Իշխանի իր շեֆը նշանակ-
վելու 25-ամեակը: Ապա Նոյա Բարձրութիւննե-
րը հոկտեմբերի 13-ի գիշերը նորից երկաթուղու
վագոններում անցկացնելուց յետոյ, հոկտեմբերի
14-ին առաւօտեան ուղևորվեցան դէպի Բաթում,
որտեղից նոյն օրը, երեկոյեան, պիտի ուղևորվեն
դէպի Ռուսաստան:

ՍՈՒՐԱՄԻՑ հեռագրում են վրաց «Իվերիա»
լրագրին, որ հոկտեմբերի 12-ին Սուրամի երկա-
թուղային տուէն էլ երկու կողմի բանւորները
միմեանց հանդիպեցին և այդպիսով տուէնի փո-
րկը իր նշանակված ժամանակին աշոգութեամբ
վերջացաւ:

Կ. Պօլսից, պ. Տիգրան կամարականից ստա-
ցանք իր հեղինակած «Վարժապետին աղջիկը»
վերնագրով բաւական մեծ վէպը, որը առաջ ար-
պագրվում էր մաս մաս «Արևիկը» լրագրում և
այժմ տպված է առանձին գրքով, և արժէ 12
դրուշ: «Վարժապետին աղջիկը» վէպի նիւթը
վերցրած է Պօլսի տեղական կենսից, և հենց
այդ պատճառով ուշադրութեան արժանի է, քա-
նի որ Թիւրքահայերի գրականութեան մէջ սե-
փական կենսից վերաբերվող վիպական գըր-
ւածներ շատ քիչ կան:

Ինչպէս են «Համբէտ», «Ֆաուստ» և «Առաջակ-
ներ»:

Հեռու չը գնանք, և կարծում ենք որ այդ վեպ-
րիկ օրինակով էլ արդէն պարզվում է թէ ինչով
է ձեռք բերվում գրական հեղինակութիւնը, և ո՞ր
կարող է համարվել գրական ամբողջութեան:

Եթէ մեր «ազգային խաները» իրանց այդ տե-
սակ անհիմն և սխալ դատողութիւնները մէջ մի
փոքր աւելի շրջանկատ լինէին, կը տեսնէին որ
նոյն իսկ հայոց մտաւոր-հասարակական կենսից
կատարելապէս հակասում է իրանց հայեցակէտե-
րին, և միանգամայն հաստատում մեր ասածը:
Մեր գրողները և ամեն տեսակ գործողները, շատ
քիչ բացառութեամբ, աւելի ժողովրդական մար-
դիկ են, դուրս են եկել բուն ժողովրդի միջից, և
առանց դիպլոմաներ ու կարիերիստական ճնդ-
տուններ ունենալու, իրանց ընածին տաղանդի,
ինքնուրոյն մտածողութեան և անարատ եռանդի
չնորսով գործել են և մեծ գործ են տեսել:

Ասեցէք խնդրեմ, ո՞ր Բաֆֆի Մեր ըստի-
նականները այդ շատ լաւ գիտեն. նոյն այդ մար-
դիկ միացած «Մեղուի» խմբի հետ երկար տարի-
ներ ամեն տեսակ հայոյանք և ծաղր էին թա-
փում Բաֆֆի վրա, ասելով, որ «պարսկաստան-
ցի տգէտ, մի խաչագող, մի անուս մանրավա-
ճառ, ուսումից զուրկ մի հեղինակաւոր համար-
ձակվում է հասարակական հարձեր վճռել, հա-

Երեկ ստացված «Новое Время» լրագրում կարդում ենք հետևյալը: «Թուրքական և թիֆլիսյան հայերի լեզուով հրատարակել մի գրականական-հարակական ամսագիր (Մուրա) անունով: Թարգման հրատարակող հաստատված է Ս. Էֆ. Արամյանին»: Ապագայ ամսագրին առողջություն ենք ցանկանում:

Արևիկի օր, հոկտեմբերի 6-ին, բանկի թատրոնում պ. Ֆորկաստիի ուսուցիչական խումբը պետք է ներկայացնի Շեկսպիրի «Համլետ» պիեսան: «Համլետի» դերը պետք է կատարի պ. Լիզովիցով: Թե՛ Արամյանի և մի քանի ուրիշ ուսուցիչական դերասաններից յետոյ, պ. Լիզովիցով որքան աշողութիւն կունենայ թիֆլիսյանում, «Համլետի» դերում, այդ ցոյց կը տայ կիրակի օրվայ խաղը:

ԱՌԱՅՈՒՄՈՒՄԻ մեր մշտական թղթակիցը հաղորդում է մեզ հետևեալը: Այսպիսով բացվում է Անտառապահական երկրորդ կարգի դպրոց, հիմուն և մասնագետ անտառային կոնսուլտորներ պատրաստելու համար: Երազրի մանրամասնութիւնները հետ կը ծանոթացնեմ ձեր լրագրի ընթերցողներին:

Մեզ գրում են ԱՌԱՅՈՒՄՈՒՄԻ հետեւեալը: «Գարնան սկզբից ո՛րքան քաղցր յայտնող հրապարակում էր թէ երկրագործը և թէ սպառող քաղաքացին, այսօր հիմնովին յուսաբեկ եղած են երկուսն էլ: Գործնի հասկերը չարդարացրին մեր յոյսերը, միայն յարդի առատութիւնը ապահովացնում է անասունների ձմեռային ճարակը: Այսօր շուկայում վաճառվում է տեղական ալիւրի պուրը 1 ր. 30 կոպէկից մինչև 1 ր. 40 կ., իսկ Շիրակի ալիւրի պուրը 1 ր. 60 կոպ.: Բանջարեղէնի առատութիւն է. միսը, իւղը, ձուն և այլ մթերքները թանգ չեն»:

Հոկտեմբերի 9-ից մեզ գրում են ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑԻ, որ արանից մի քանի օր առաջ տեղացի ումըն մահտեսի Մարտիրոսը (որը մի ժամանակ քաղաքային դէպտատատ էր) այդտեղից Երեւան գնալիս, սպանվեց անյայտ չարագործների ձեռքով: Սպանվածի գլուխը քարերով է ծակախալած: Հանգուցեալը փոստի ճանապարհը թողած, գնալիս է եղել սարի կարճ ճանապարհով, որտեղ առաջակութիւնները սովորական բան են այդ գաւառում: Որովհետև չարագործութիւնը թուրքերից բնակած տեղումն է կատարվել, ուստի կարծւում է որ չարագործները թուրքեր եղած կը լինեն:

Մեզ գրում են, որ այս տարի Նոր-Բայազէտի կողմերում եղանակը շատ մեղմ է անցնում, այնպէս որ կալերը ծեծվել աւարտվել են, այն ինչ ուրիշ տարիներ այս ժամանակին խիստ ցուրտ է լինում սովորաբար Նոր-Բայազէտի գաւառում:

Պետերբուրգում մտադրութիւն կայ, ինչպէս

մարձակվում է գրականութեան մէջ ոտք դնել և վիճել «դիպլոմատ» մարդկանց հետ: Յիշում էք հօ, յարգելի պարոններ, թէ այդ նոյն Բաֆֆին ինչքան հայտնաբերեց կրեց իր «պատգամաւոր հակառակորդները»: Անկասկած մոռացած չէք լինի և այն, որ սրանից մի քանի տարի առաջ հայ երիտասարդութեան մի մասն էլ, այն է հայ ուսանողութիւնը, ինքն ևս զինվեց Բաֆֆի «անուսում և անգէտ» լինելու դէմ, և հայտնաբերեց թափեց նրա վրա, երբ լոյս տեսաւ «Մշակի» մէջ Բաֆֆի «Հայ երիտասարդութիւնը»: Բայց ում չէ յայտնի, որը այդ նոյն, մեծ մասամբ կեղծ և փտած ուսանողութիւնը, որ շատ էլ հեռու չէր գնացել տգէտ հասարակութիւնից և գրական «խանութից», բացի կարիքներտներից և ժամանակաւոր ֆրազիօրներից ուրիշ շատ քիչ բան տուեց մեր հասարակութեանը:

Իսկ այժմ գիտենք և տեսանք ամենքս, որ այդ «անուսում» Բաֆֆին, որը շատ տարիներ վաղեց մի «աննշան» վարժապետի պաշտօն, որ շատ տարիներ իր ընտանիքը և իրան պահելու համար նոյն իսկ հաշւապահ էր մի արհեստաւորի մօտ, դարձաւ մեր ժամանակակից կեանքի ամենափայլուն ոյժերից մէկը, որի դադարի առաջ խոնարհվեցան նոյն իսկ նրա ուղղութեան ստրկահողի հակառակորդները... ինչպէս սողուններ... Վերջերք մեր միւս ժամանակակից գործընկերներն Ո՛վ է Աշխատանք, որին անկասկած «հեղինակութեան» նշանակութիւն են տալիս և «Արձագանք» յայտարարել, որ

հաղորդում են այնտեղի լրագիրները, տօնելու ուսուցիչ արտաքին գործերի մինիստր Գիրսի յօբելեանը:

Բագում հրատարակվող «Каспий» լրագիրը հաղորդում է, որ Միջին-Ասիայի պատգամաւորութեան անդամներին թագաւոր Այսքը շնորհեց Բարձրագոյն դանազան ընծաներ: Դրանց թիւում Նուր-Ալէրդի խանի այրի կինը՝ Գիւլ-Ջամալ-Բայա Ստացաւ երկու թանգապին ապարանջան և մանակ. միւսները ստացել են մատանիներ, ժամացոյցներ և պատուաւոր խալաթներ:

Ամերիկայի Նիւ-Խորկ քաղաքի հայերը, ինչպէս լսել են արտասահմանի հայոց լրագիրները, մի ընկերութիւն են կազմում, որի նպատակն է հրատարակել մի շաբաթաթերթ, «Արեւմտեան Հայկազն» անունով: շաբաթաթերթի խմբագիրը պիտի լինի պ. Խ. Օսկանեան:

Ռուսահայերին լաւ ծանօթ Ահրամ եպիսկոպոս Մանկունի, ինչպէս գրում են Կ. Պոլսից, ընտրված է Մուշի առաջնորդ:

Մինչև այժմ, «Ջինուորագրական կանոնադրութեան» համեմատ, այրիների կամ 50 տարեկանից աւելի մեծ հայերի միակ ուղիքն էր՝ զինուորական ծառայութեան ժամանակ օգտվում էին առաջին կարգի արտօնութեամբ: Այժմ, ինչպէս լսել է «Petersburger Herald» լրագիրը, նոր կանոն է դրվում, որի համաձայն այդպիսիները, առաջվայ նման օգտվելով ընտանեկան զրուկեան վերաբերեալ առաջին կարգի արտօնութեամբ, այնու ամենայնիւ երկու տարին մի անգամ ծառայութեան կը կանչվեն: Այդ նոր կանոնի նպատակն է պահեստի դրօշի և հանրազօրքի ամբողջ կազմը պիտանի դարձնել ծառայութեան համար՝ պատերազմի դէպքում:

Ներկայ թւականի զինուորագրութեան ժամանակը մօտեցած լինելու պատճառով, ինչպէս երևում է Անդրկովկասի դանազան կողմերից մեզ հասած տեղեկութիւններից, արդէն պետրաստութիւններ են տեսնում ցուցակագրութեան ձեռնարկներ լինելուն: Ջինուորագրական կանոնադրութեան համեմատ, այս տարի զինուորական պէտք է ենթարկւն այն երիտասարդները, որոնք ծնվել են 1867 թվին:

Հինգշաբթի, հոկտեմբերի 13-ին, ուսուցիչ դաստիարակ խումբը բանկի թատրոնում ներկայացրեց «Вторая Молодость» (երկրորդ ջահիլութեան) դրամա չորս գործողութեամբ, հեղինակութիւն Շեկսպիրի, և «Купленный Выход» վերջին 1 գործողութեամբ: Վերջինիս երկու պիեսներում ևս մասնակցում էին Ֆորկաստիի խմբի ամենալաւ դերասանները և դերասանուհիները, և այդ պատճառով պիեսները խաղացվեցան ամենայն բարեխղճութեամբ: Միայն պ.

թեան» նշանակութիւն են տալիս և «Արձագանք» յայտարարել, որ «պատգամաւորները», և որը անուսում ունեւորակ մողովրդական վիպասան, — Աղայեան չէ աւարտել նոյն իսկ միջնակարգ դպրոց և հայոց վիպական և մանկավարժական գրականութեան մէջ յայտնի այդ մարդը եղել է, — մի գրաշուք:

«Հայի խնդիր» և «Կուսակցական» հեղինակը, որին նշանաւոր գրական ոյժ համարելով ինքն «Արձագանքի» խմբագիրը դատաւորել է իր յայտնի աշխատակիցն երի շարքում, թէ «Փորձի» դոյութեան ժամանակ, և թէ «Արձագանքում», և որի երեսնամեայ յօդակեանք տօնելու մասին այժմ իսկ խօսում են: — Նոյնպէս անուս մի անձ է, չէ ունեցել ոչ ղրիքը և ոչ էլ «պատգամներ», և ամենքին յայտնի է, որ այդ նոյն Պառնասի եղել է — ուսանակալ:

Մի ուրիշ փորձիկ օրինակ ևս թիֆլիսում հրատարակվող «Աղբիւր» ամսագիրը, որի մասին շատ գովասանքներ է գրել ինքը «Արձագանքը», հրատարակվում է խմբագրութեամբ պ. Տ. Նազարեանի, որը նոյն իսկ միջնակարգ ուսում էլ չունի:

Այդ ամսագրին ոյժ տուողները սկզբից ի վեր եղել են «անդիպում» և անյայտ երիտասարդներ: Աւելի նոր գործընկերներ ղիմելով, և չը վազելով «անունների» ետեւից, «Աղբիւրը» կարողացաւ ապրել այսպէս տարի, բայց վերջին տարիները նրա հրատարակիչը գուցէ աւելի ձեռնառու

գործին, որը խաղում էր Գոտովցեվի, պիեսայի գլխավոր հերոսի որդու դերը, բոլորովին իր դերում չէր, սաստիկ փչացնում էր անսամբլը և ամենադրամատիկական տեղերում հասարակութեան ծիծաղն էր շարժում: Չնայ կարող և մի քանի խօսք չափել Գոտովցեվի դերը խողացող պ. Լիզովիցովի մասին: Պարոնը չը նայելով որ շատ ընդունակ դերասան է երևում, բայց այն տպաւորութիւնը չէր գործում այդ դերում հասարակութեան վրա, ինչ տպաւորութիւն որ գործում էր անցեալ տարի Ֆորկաստիի խմբին մասնակցող պ. Ֆադէեվի Մենը կարծում ենք, որ պ. Լիզովիցովի խաղի տպաւորութիւնը կորչում էր մասամբ գրիմի պատճառով: Գոտովցեվ պէտք է 50 տարեկանից մի փոքր անց մարդ լինի, իսկ Լիզովիցով 35 տարեկան տղամարդու էր նման: Գերասանուհիները ամենքն էլ շատ լաւ էին կատարում իրանց դերերը, և դրանցից առաջ Մալեբովա և Եսթրօֆկինա ամենից շատ ծափահարութիւններ ստացան: Ներկայացումը վերջացաւ փոքր լիով, որի մէջ պ. Ֆորկաստի, անպիտան դերը խաղալով, մեծ գուրծաւութիւն պատճառեց հասարակութեանը, որը վարձատրում էր նրան բուռն ծափահարութիւններով:

Մեզ խնդրում են տպել հետեւեալ նկատողութիւնը: «Ներսիսեան դպրոցի վարչութիւնը, ինչպէս երևում է, բոլորովին մոռացել է եօթերորդ դաստիարակ ունենալու, կամ աւելի լաւ է ասել մանկավարժութեան հարցը: Եօթերորդ դաստիարակ փակելուց յետոյ, այդ դպրոցի վեցերորդ դաստիարակ շարունակում են աւանդել հոգեբանութիւն, տրամաբանութիւն և բարոյագիտութիւն, որոնց գլխավոր նպատակներից մէկն է նախապատրաստել աշակերտներին մանկավարժութեան համար: Բայց մանկավարժութիւնը մի քանի ասարի է արդէն որ դաս չէ տրվում այդ դպրոցում, որի աշակերտների մեծ մասը իրանց նուիրում են վարժապետական ասպարէզին: Եթէ եօթներորդ դաստիարակ բանալը հնարաւոր չէ, այն ժամանակ կարելի է մանկավարժութեան գլխավոր մասը գոնէ վեցերորդում անցնել, ապա թէ ոչ ինչ մի առանձին միտք ունի հոգեբանութիւն և այն ուսուցանել առանց մանկավարժութեան, այն էլ վարժապետներ պատրաստող մի հիմնարկութեան մէջ»:

Արտասահմանի հայոց մի լրագիր հաղորդում է, որ Ամերիկայում հրատարակվող «Արեգակ» շաբաթաթերթը դարձեցրել է իր հրատարակութիւնը:

Պ. Քամալեանց խնդրում է մեզ յայտնել ի դիտութիւն օտարաբանացրեցին այն անձանց, որոնք յանձն են առել իր ժողովածուի բաժանորդութիւնը տարածել, որ ժողովածուն իր առաջվայ «Յոյս» վերնագիրը կրելու փոխարէն, կը կրէ «Կաշնակ» անունը:

համարեց, և ձ. «Արձագանք» յայտարարել, որ «Աղբիւրին» կաշնակաւցեն» Հ. Ալիշան, Օրմանեան եպիսկոպոսը, Արտանձաեան եպիսկոպոսը, պ. պ. Մանդինեան, Բէգնապարեան, փ. Վարդանեան և այլ այդպիսի նշանաւոր համարվող անձինք, և անկասկած դրանով «Աղբիւրի» հրատարակիչը կարծեց, որ աւելի աշողութիւն կունենա: Նայելու հակառակ դուրս եկաւ. անունները նիւթ չը տուեցին, և մեր կարծիքով «Աղբիւրը» աւելի «թաթմ» և աւելի «յորդ» էր, երբ հիմնված էր մեծ «պրետենզիա» չունեցող անյայտ, բայց եռանդուն և գործող ոյժերի վրա, քան թէ երբ նա սկսեց «անուններով» պարծենալ իր ընթերցողներին առաջ...:

Մենք կարծում ենք, որ այդքան օրինակներն էլ բաւական են, ցոյց տալու համար որ մարդկանց «մտաւոր ընդունակութիւնները», «գրական ոյժի» հասարակական գործունէութեան չափը, բուրրութիւնն այն չէ, ինչ որ կարծում են մեր «աղբիւրի» գործողները, որոնց, ի հարկէ, շատ ձեռնառու է մօնօպօլիայի տակ դնել մեր գրականութիւնը էլ, մեր մտաւոր գործունէութեան ասպարէզն էլ:

Եթէ գրական հեղինակութիւնները հիմնված լինէին այն սիւների վրա, որոնց վրա հիմնվում են «Արձագանքի» աշխատակիցները, այն ժամանակ, անկասկած, պ. Յովհաննիսեանի հասարակական

թիւ ԱՌԻՑ մեզ գրում են: «Թեւաւի գործակալութեան բազմաճառ և հարուստ գիւղերը մնում են առանց ծխական ուսումնարանների, եռանդուն գործիչների բացակայութեան պատճառով: Յիշե՛ք միայն Կվարէլ, Ուրիաթուբան, Սանիօրի և Մատան գիւղերը, որոնք ոչ թէ միայն մէկ, այլ մինչև անգամ երկու դպրոց կարող էին պահել: Անհրաժեշտ է եկեղեցական դպրոցների կառուցութիւնը այդ գիւղերի համար»:

Մեզ գրում են թիւ ԱՌԻՑ հետեւեալը: «Սրբազան առաջնորդի կարգադրութեամբ վերջապէս հրաժարեցրած են եկեղեցական-ծխական ուսումնարանների հոգաբարձուները, որոնք ամբողջ 18 տարի իրանց համար մի տեսակ մօնօպօլիա էին շինել մեր դպրոցները: Յաւում ենք միայն, որ դեռ ևս կատարված չէ յիշեալ օգտաւէտ կարգադրութիւնը»:

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑԻ մեզ գրում են հոկտեմբերի 9-ից հետեւեալը: «Հուռով զինուորագրական ատենը իր գործունէութիւնը կը սկսէ: Առաջին վիճակահանութիւնը կատարվելու է Նոր-Բայազէտում իր շրջակայ ութ գիւղերի հետ միասին: Այդ վիճակահանութեանը, որը նշանակված է, որքան լսել ենք, ամսիս 15-ին, հրաւիրված են մօտ 400 երիտասարդներ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԹԻՆ ՓԱՇԱ ԴԱՐԵԱՆ

Մենք արդէն հաղորդեցինք, որ Արթին բէյ Գաղեան, թիւրքաց արտաքին գործերի մինիստրի օգնականը՝ ստացել է «վէզիրութեան» ասորձան: Մօսկվայում հրատարակվող «Моск. Вѣдомости» լրագրի վերջին համարներից մէկում կարդում ենք մի թղթակցութիւն Գաղեանի մասին, որը արտասպիւ է և տեղական «Нов. Обозр.» լրագիրը և որի մի քանի կէտերը աւելորդ չենք համարում առաջ բերել:

Արթին բէյ իր ծառայութիւնը սկսեց ամենաստորին աստիճաններից՝ ինչպէս առհասարակ պատահում է թիւրքիստան ծառայող քրիստոնեաների հետ. նա սկզբում գրագիր էր, յետոյ դարձաւ քարտուղար արտաքին գործերի մինիստրութեան զինանախնիքի մէկում: Առաջին անգամ նա աչքի ընկաւ այն ժամանակ, երբ նշանակվեց Բէրայի թաղապետ. թուրք թաղապետներից յետոյ, որոնք մի առանձին օգուտ չէին տալիս Պոլսի այդ եւրօպական թաղին, Արթին բէյը գործունէութիւնը շատ աչքի ընկաւ և նորա անուրը բարձրացրեց Նրա մասին սկսեցին խօսել իբրև մի լսելօք զիպմատի մասին, որը համ եւրօպացիներին էր դուր գալիս, համ էլ թուրքերին, — իսկ դա Պոլսում ձեռնառու յատկութիւն է: Թէև Արթին բէյը դանից յետոյ պաշտօնադուր իջաւ, բայց ապա կրկին անգամ

գործունէութիւնը շատ և շատ արդիւնաւէտ պէտք է լինէր, որովհետև նա խմբագիր և հասարակական գործիչ լինելուց շատ աւելի առաջ ձգտել է ձեռք բերել արդիւնաւոր դիրք, պայտօն և անուն: Այդ դեռ քիչ է. պ. Յովհաննիսեանի խմբագիր-հրատարակիչ լինելն էլ, նրա «Փորձ» և «Արձագանք» հրատարակելը, և նրա խառնվելը դանազան հասարակական ու աղբիւրի գործերի մէջ, ամենից առաջ նպատակ է ունեցել հասցնել պ. Արգար Յովհաննիսեանին իր գլխավոր տենչանքին, — այն է արդիւնաւոր և փայլուն դիրքի:

Այդ արդէն բաւական է չափելու. համար «Արձագանքի» հրատարակիչ հասարակական-գրական գործունէութեան արժէքը և նշանակութիւնը, որի մէջ ամեն բան կայ, բացի ընդհանուր նպատակից և լայն ձգտումներից: Ամենայն ստանաօր տուութեամբ հետեւելով պ. Յովհաննիսեանի գրական և հասարակական գործունէութեան, անկողնապահ կերպով կրկնակայ ենթարկելով այդ մարդու շատ և չորս տարվայ գործունէութիւնը, — մարդ այն եղբայրացութեան է գալիս, որ պ. Յովհաննիսեանի ամենամեծ իղէալը այդ բոլորի մէջ եղել է և է իր «եսը»... Սակայն «Արձագանքի» հրատարակիչը գիտացել է այդ բոլորը քաղաքակրթական միջոցներով...

Գեռ. Նորբեր իր օրգանի այս տարվայ № 23-ի մէջ պ. Յովհաննիսեան, «Մշակի» հետ ունեցած անաջող բանակաւից յետոյ, ողբերկով գրեց հե-

Պէշի կը պատահէր, նոյնն է Բարձրագոյն Կա-
մար ալ, նա ևս ունեցած է իրեն 70-էն աւելի
հակառակորդներ, և եթէ ընտրուի, համեմատա-
կանի մէջ ժողովականները կամ, ի հարկէ, բռնա-
դատեալ քուէ պիտի տան, կամ չէզոք պիտի կե-
նան. իրաւունքը է այս, օգտակար է այս:

Եւ յետոյ ինչ է համեմատականին ոգին կը
կուսակցութիւնները չեն կրնար համաձայնել, այն ա-
տեն ելլից միակ հնարը համեմատական քուէարկու-
թիւնը կը ներկայանայ, իսկ երբ կուսակցութիւն-
ները պատրաստ են համաձայնելու, ինչ հարկ դի-
մել այդ միջոցին: Ահա Ազգ. Ժողովոյ երեք քա-
ռորդը պատրաստ է նոր անուան մը վրայ միանալ
հարտար միջոցաւ մը, Նար-Պէշի հրաժարականն
է:—դիտելու է թէ եթէ Նար-Պէշ չը հրաժարէր,
կուսակցութիւններու միաբանութիւնն անդոր էր
ընտրողական օրէնքին առաջ—արդ ընդունինք այդ
հրաժարականը և տանք Ազգին խաղաղութիւն:

(Կը շարունակվի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ինչպէս հեռագրում են Վիեննայից, հոկ-
տեմբերի 6-ին արդարադատութեան նոր միջնորդ
Յենրօրն պաշտօնական ընդունելութիւն ունէր, ու-
րի ժամանակ նա յայտնեց, որ ամեն ջանք կը
թափի անկախ պահելու դատաստանական դա-
տակարը, և որքան կարելի է համաձայնեցնելու
իրաւաբանական հասկացողութիւնները այժմեան
կեանքի պահանջներին հետ:

—Բէլգրադում բացված է մի դաւադրութիւն
կառավարութեան դէմ:

—Փարիզից գրում են, որ պարլամենտում,
սահմանադրութեան վերաբնութեան նախագծի
առաջարկած ժամանակ, ընդհանրապէս ժողովը
մի առանձին թշնամական ցոյց չարեց, և նախա-
գիծը յանձնաժողովին տալու առաջարկը ըն-
դունիլից առաւելութեամբ 307 ձայնի, ընդդէմ
181-ի:

—Գերմանական կառավարութիւնը արդեւից
Ֆրանսիական մի քանի լրագրողների մուտքը Էյ-
զա-Օթարինգի:

—Փարիզի «Temps» լրագիրը այժմ սկսել է
խտուրթեամբ յարձակվել Ֆլոյէի այն նախագծե-
րի վրա, որոնք պահանջում են սահմանադրու-
թեան վերաբնութեան:

—Աւստրիական մի քանի լրագրողներ տեղեկա-
ցել են, որ Միլան թագաւորը Բէլգրադ վերա-
դառնալուց յետոյ անմիջապէս պէտք է ձեռնար-
կէ կրկին իր ապահարկանի գործին, և որ նա
ուզում է անպատճառ բաժանվել իր ամուսնուց,
և այդ նպատակին հասնելու համար, նա մինչև
անգամ վճռել է լուծել խոստովանում, եթէ այդ
հարկաւոր կը լինի: Վերջին լուրերից երևում է,
որ խոստովանողին անգամներով մի քանիսը ար-
դէն արձակված են:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 հոկտեմբերի: Գործարաննե-

րում, և մանուֆակտուրային ֆաբրիկաներում
աշխատող փոքրահասակների և կանանց ու պա-
տանիների դիւնդային աշխատանքների վերաբե-
րեալ օրէնքի գործադրութիւնը պիտի շարունակ-
վի մինչև 1890 թվականի յունվարի 1-ը:

ՔՈՒՐԱՅԻՆ, 13 հոկտեմբերի: Երէկ, ցերեկվայ
ժամը 4-ին Նոյն կայսերական Մեծութիւնները
կարայազից, որտեղ որս էին անում, հասան
Քուրային:

ԲԷԼԳՐԱՅԻՆ, 13 հոկտեմբերի: Միտրոպոլիտը,
թագաւորի խնդրելով, որը հրատարակված է
պաշտօնական լրագրում, յայտարարում է նոյն
լրագրում, որ Միլանի Նախալիա թագուհու հետ
ունեցած ամուսնութիւնը լուծված է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 հոկտեմբերի: «Journal de
St. Petersburg» լրագիրը ստատուս-սկիզբ տար
Գիրսի կեանքի և գործունեութեան տեսութեան
մէջ, նրա յօդուհանի առիթով, յիշատակում է
թագաւոր կայսրի գահակալութիւնից և թագա-
ղութիւնից յետոյ միջնորդի հրատարակած շրջա-
բերականները, որոնք վկայում են, որ Ռուսաս-
տանի քաղաքականութիւնը միշտ եղել է հետեւե-
ղական և խաղաղասիրական Միապետի թագաւո-
րութեան ժամանակ, որը արժանացրել է ստա-
տուս-սկիզբ տար Գիրսին նոյն հաւաստիքներին,
ինչ հաւաստիքներով որ նա օգտվում էր հան-
գուցեալ կայսրի ժամանակ: Միջնորդի միակ
հոգը եղել է, — ինչի միջոցով կայսրի հա-
ւատարմի ծառայ, ծառայել իբր նրա ար-
տայաբոյլ Ռուսաստանի պատիւը և ամբող-
ջութիւնը պաշտպանելու կոչման մէջ և նպատակ
կայսրութեան զարգացմանը այն բոլոր միջոցնե-
րով, ինչ միջոցներ որ ունի նորանից ղեկավար-
վող դիպլոմատիան: Իսկ վկայաւոր միջոցներն են
հայրենասիրութիւնը, ազնւութիւնը և ողջամտու-
թիւնը: «Journal de St. Petersburg» լրագիրը
մատնանի է անում Ռուսաստանի թշնամի մա-
մուլի նոր որդայիները վրա, Վիեննայի մի լրա-
գրի յօդուածների առիթով, որը սպասում է
սուլթանին դաժնիկեցութիւն, եթէ նա կը մերժի
միանալ խաղաղութեան միութեանը: Այդ լրա-
գրութիւնը յայտարարել է, որ դա ուռաց ինտ-
րիպա է, որի նպատակն է սուլթանի մէջ կառ-
կած յարուցանել դէպի երեքսիտեան դաշնակ-
ցութիւնը: «Journal de St. Petersburg» պնդում
է այդպիսի որդայիների անհիմն լինելը և
յայտնում է, որ այդ տեսակ ոչ մի միջոց չի ա-
ջողվի չեղել ուռաց կառավարութիւնը այն ա-
մուր, կանոնաւոր և խաղաղասիրական ուղղու-
թիւնից, որի մասին նա բարձրաձայն յայտարա-
րել է, և որին նա մինչև այժմ անընդհատաբար
հետեւել է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 հոկտեմբերի: Իր յօդուածնի
օրը արտաքին գործերի միջնորդ Գիրս ստացել է
չնորաւորական հեռագրներ. թագաւոր կայս-
րից, թագուհի կայսրուհուց, թագաւորանից Զե-
սարելիից, գերմանական կայսրից, իտալական
թագաւորից, իշխան Բիսմարկից և Կրիպից:
Գիրսի մատակարար մարմինը, չնորաւորելով յօդ-
ուածները, ընծայեց նրան մի ոսկեայ թանաքաման,
որի վրա գրված էր աղամանդներով զարդա-
ված յօդուածների անուան: Միջնորդութեան մէջ
ծառայողները մատուցին նրան մի շքեղ ալքոհ,
որը պարունակում էր Գիրսի դիպլոմատիական
գործունեութեան նշանաւոր անցքերը: Ասիական
դէպարտամենտի դաշինքներում ճաշկերպի տեղի
ունեցած ի պատիւ յօդուածի, իսկ այսօր լինե-
լու է ճաշկերպի գերմանական դեսպանատան
մէջ, որին մասնակցելու են բոլոր դեսպանները:
Լուր կայ որ երեքսիտութիւն է ընդհանուր ժողովը
զագրութիւն:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԻԳՈՐ ԱՐՄԵՆԻՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր

ԲՈԼՈՐ ՀՈԳԱՏԱՐ ԳԵՐԴԱՍՏԱՆԱԻՈՐՆԵՐԸ

ուրախութեամբ օգուտ կը քաղեն Մօսկվայի Բ. ԿԵՕԼԵՐ և ԸՆԿ. յայտնի առևտրական տան
ներկայ առաջարկութիւնից, այժմեան չեղած էժան գնով իւրաքանչիւր տան մէջ ամենամա-
հրաժեշտ բնական միջոցներից մէկը ձեռք բերելու համար, այն է՝

Խ Ի Ն Ի Ն

և մի և նոյն ժամանակ ընդունելու համար այնպիսի յարմար ձևով, որպէս են մաքուր բրն-
ձէ ալիւրից փաթեթներ, լցված ծծմբաթթուաւային և աղաթթուաւային խինինով՝ զանազան
քանակութեամբ, որոնք գործարանական եղանակով պատրաստված են Բ. ԿԵՕԼԵՐԻ Անդրո-
նիէվեան դեղատան մէջ Մօսկվայում: Գեղարդիներից իւրաքանչիւրի մէջ 12 հատ գտնվող
այդ փաթեթներին այժմեան գնները հետեւեալներն են՝

1	2	3	4	5	10	զրան ծծմբաթթուաւային խինինի
25 Կ.	35 Կ.	40 Կ.	45 Կ.	50 Կ.	85 Կ.	
և 1	2	3	4	5	10	զրան աղաթթուաւային խինինի:
28 Կ.	40 Կ.	45 Կ.	50 Կ.	55 Կ.	95 Կ.	

Անդրոնիէվեան դեղատան մակագրեալ տախտակով և կնքով:
Գաւառներում ծախվում է բոլոր նշանաւոր առևտրականների մօտ. Մօսկվայում—Բ.
ԿԵՕԼԵՐԻ և ԸՆԿ. մօտ, Նիկոլայայա փողոցի վրա:

№ 2. II. K. O. (3—3)

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

Որ աւարտել է Պետերբուրգի ուսուցչական ինստիտուտում և մի քանի
տարի կատարելագործվել է արտասահմանում ջութակով ԳԱՐԻԳՈՐ ԳՆՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
ԱՇՆԱԿԵՐՏՆԵՐ ԳԻՄՆԱԶԻՍԵՐԻ, ԲԷԱԼԱԿԱՆ ԵՒ ԲՈԼՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ:
Նա պահում է և ԳԻՇԵՐՈՒԿՆԵՐ (պանսիօներ և նախընթիկ):
Ցանկացողները թող դիմեն Տէր-Յակովբեանցին. Тифлисъ. Большая
Ванская улица, д. № 3.
4—7

ԱԶԳԱՍՏԱՆՈՎ Հիւանդների ընդունելութիւնը բժշկապետ ԲԵՐԻՄԻ մօտ վերա-
նորոգված է:

ՆՈՐ բնակարանը՝ Գրիբոեդովայա փողոց, խարազովի տուն, № 3:
Ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև 10 ժամ:
1—4. (2. Ե.)

ՎԻԵՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ВѢНСКІЙ МАГАЗИНЪ

ԵՂՐ. Վ. Ե. Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻ

Գօլօվինսկի պրօսպեկտի վրա, Միքիմանի տանը, առաջին կլասիկական գիմնազիայի
դիմաց

Դ Է Պ Օ

Մարդկանց և երեխայոց պատրաստի հագուստներ:

Ստացել ենք մօտ օրերս զանազան յայտնի և նշանաւոր գործարաններից մեծ քա-
նակութեամբ աշնանային և ձմեռային ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱՊՈՒՈՏՆԵՐ ամենալեզելին ձևի:
Գները՝ ամենամատչելի և ձեռնառու են:

II ՊԱՇՏՆԱՐ Գտնվում է եղբ. Աբովեանների տանը № 1, 2, 3 և 4, Ալեքսանդրեան
այգու դիմաց:

Եղբ. Վ. Ե. Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻ

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

ԱՐԻՍՏՈՂՈՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

ՌՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԴԻՐԻ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Գինն է 3 րուբլի, ճանապարհի ծախսը գնողի վրա է:

Միանուագ քսանից աւելի գնողին զիջումն կը լինի:

Վաճառվում է ԲԱՅԱՌԱՊԵՍ Խիդիկէլի և ԸՆԿ. գրավաճառանոցում, Թիֆ-
լիս, Գօլօվինսկի Պրօսպեկտ, առաջին Գիմնազիայի հանդէպ:
8—40

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱՌԴՍԻ մէջ և փոխադարձ.
Հինգշաբթի, հոկտեմբերի 27-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMENIE) շոգեհաւը, նաւապետ
ԳԱՐԻԳ (GARRIGUES) զուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն,
Կ. Պօլիս և Մարսէյ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան
գործակալներին. Բաթումում՝ Լճօղլուի տան, Նաբեքէժայա, և Թիֆլիսում՝ նախկին Ար-
ժրուհի գալլիէում, № 103.
1—3 (2. Կ. Ե.)

ԽԼՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԼԻԻ ՄԷՋ ԽՇՇՈՑ

Ինչպէն աղատվել այդ ցաւից: Պէտք է նամակով դիմել, բացատրութիւններ պա-
հանջելու համար, ֆարիզ, պ. Նիկոլային, հետեւեալ հասցեով. Парижѣ (Франція)
Nicolson, rue Drouot, Paris.
2—6

ՍԵՒ ԵՒ ՍՊԻՏԱԿ ՊՂՊԵՂ, ԱՂԱԾ

Բ. ԿԵՕԼԵՐԻ ԵՒ ԸՆԿ. ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ, ՄՕՍԿՎԱՑՈՒՄ

Աղած պղպեղի հետ խառնուրդներ անկը այժմ այնպիսի սովորական երեւոյթ է զար-
ձիկ առևտրի մէջ և այն աստիճան ամեն սահմաններից անցել են, որ պատրաստի աղած
պղպեղը կորցրել է իր արժանաւորութիւնը բոլոր սպառողների աչքում ի նկատի ունենա-
լով այդ «Բ. ԿԵՕԼԵՐԻ և ԸՆԿ. Ֆիլիման Մօսկվայում» սրանով յայտարա-
րում է, որ իր գործարանում աղած պղպեղը (որպէս և մնացած համեմունքները խոհանոցի
և սեղանի համար) ԱԶԳԻ Է ԸՆԿՆՈՒՄ ամեն տեսակ խառնուրդների բացառաւորութեամբ:
Ծախվում է գաւառներում բոլոր նշանաւոր առևտրականների մօտ. Մօսկվայում—Բ.
ԿԵՕԼԵՐԻ և ԸՆԿ. մօտ, Նիկոլայայա փողոցի վրա:

№ 2. II. K. O. (3—3)

ԻԳԻԻՐԻ հայոց եկեռ. զարդաների գրադարանի վարչութիւնը գիմելով յարգոյ հե-
ղինաներին, թարգմանիչներին և բանասէրներին, խնդրում է նրանց ուղարկել զրա-
դարանին իրանց նոր աշխատութիւններից մի մի օրինակ, որով շատ նպաստած կը լի-
նեն զրամական միջոցներից զուրկ զրադարանին, Հասցէն. Игдырь, Библиотека Арм.
ШКОЛѢ.
3—3